



05/2429-17
1/05-1/2143-17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ № ձձԵ-ՉԿ

ք. Երևան

« 3 » Շարգի 2017 թ.

ԱՐՄԵՆ ԺՈՐԱՅԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 3-ի N 259-Ն որոշմամբ հաստատված 1-ին հավելվածի 16-րդ կետի 12-րդ ենթակետով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերը և թափուր պաշտոնը զբաղեցնելու համար անցկացվող մրցույթում հաղթող ճանաչված մասնակցի վերաբերյալ մրցութային հանձնաժողովի 2017 թվականի փետրվարի 28-ի եզրակացությունը և Ա. Կարապետյանի դիմումը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Արմեն Ժորայի Կարապետյանին նշանակել Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության (այսուհետ՝ ՀՀ ԱԻՆ) աշխատակազմի բնակչության պաշտպանության քաղաքականության ծրագրերի և տեղեկատվական հոսքերի կառավարման վարչության պետի (21-2.1-1) պաշտոնում:
2. ՀՀ ԱԻՆ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետին՝ աշխատանքի վճարումը կատարել օրենքով սահմանված կարգով:
3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:
4. Հրամանը հայտարարել ըստ առնչության:

ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆ

ՍՏԻԳՆ